ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 114-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 114-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները**.**

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ `

1. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2002 թվականի օգոստոսի 22-ի ««Ջրօգտագործման մասին» Ձև N 2-տա (Ջուր) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և «Ջրօգտագործման մասին» Ձև N 2-տա (Ջուր) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը հաստատելու մասին» N 114-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի N1 հավելվածի «Համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի հետ՝ 21 հոկտեմբերի 2008թ. N 30-Ա որոշմամբ» բառերը հանել,

2) Հրամանի N 1 հավելվածի աղյուսակի.

ա. 1-ին տողում ««Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թ. ապրիլի 4-ի ՀՕ-48 օրենքի, օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թ. մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 19.1-ին և 19.2-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 19-Ն որոշման 6-րդ մասի» բառերով,

բ. աղյուսակի 1-ին սյունակից «Ում է ներկայացվում———» և «(ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ տարածքային բաժնի անվանումը)» բառերը և կետադրական նշանները հանել, իսկ «գրանցման համարը» բառերից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման

համարը» բառերով,

գ. աղյուսակի 2-րդ սյունակից «Հաստատված է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2008թ. դեկտեմբերի 16-ի N 452-Ն հրամանով» բառերը հանել, իսկ «1 օրինակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային բաժին» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի նախարարություն՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» (https://nature.e-gov.am/) էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով։

3) Հրամանի N1 հավելվածի՝

ա. «**Բաժին 2. Ջրօգտագործում**» բաժնի աղյուսակի «է ջուր» բառերը փոխարինել «ջրածավալ» բառով, «ոռոգման» բառը՝ «գյուղատնտեսական (ոռոգում և ջրարբիացում)» բառերով, իսկ «ձկնատնտեսական» բառը՝ «ձկնաբուծական» բառով,

բ. «**Բաժին 2.1 Այլ սպառողներին փոխանցված ջուր**» բաժնի աղյուսակի 2-րդ և 5-րդ սյունակներում «քանակը» բառերը փոխարինել «ջրածավալը» բառերով,

գ. «**Բաժին 3. Ջրհեռացում**» բաժնի վերնագրում «**Ջրհեռացում**» բառը փոխարինել «**Ջրահեռացում**» բառով, աղյուսակում՝ «Ջրընդունիչի» բառը փոխարինել «Ջրահեռացման վայրի» բառերով, «Հեռացված են հոսքաջրեր» բառերը՝ «Հեռացված կեղտաջրերի քանակ» բառերով, «չափորոշային» բառերը՝ «չափանիշային» բառերով,

դ. «**Բաժին 4. Վնասակար նյութերի պարունակությունը հոսքաջրերեում**» բաժնի վերնագրում «**հոսքաջրերեում**» բառը փոխարինել «**կեղտաջրերում**» բառով, իսկ աղյուսակում «Ջրընդունիչի» բառը փոխարինել «Ջրահեռացման վայրի» բառերով,

ե. «**Բաժին 5. Լրացուցիչ տեղեկատվություն**» բաժնի աղյուսակի 509-րդ տողի Բ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը», իսկ 510-րդ տողի Բ սյունակում «ջրահամակարգի» բառը փոխարինել «ջրային համակարգի» բառերով,

զ.« Ծանոթություն

_____

(փոփոխություններ, լրացումներ, շեղումներ և այլ հանգամանքներից բխող հայտարարագրեր)

Կազմող _____ Ընդունող _____

Անուն Ազգանուն Անուն Ազգանուն

Հեռ. _____ Պաշտոն _____

Ղեկավար _____ Ստորագրություն _____

Անուն Ազգանուն

Պաշտոն _____ _____ _____200....թ.

Ստորագրություն _____

_____ _____200....թ.

Կ. Տ Կ. Տ

» բառերը փոխարինել

«Կազմող _____

Անուն Ազգանուն

Հեռ. _____

Ստորագրություն _____

» բառերով։

4) Հավելված 2-ի 1-ին մասի՝

ա. 1-ին կետում «հոսքաջրեր» բառը փոխարինել «կեղտաջրեր» բառով,

բ. 2-րդ կետի՝

- գ ենթակետում «շրջադարձային» բառը փոխարինել «շրջանառու» բառով,

- ե ենթակետում «ձկնատնտեսական» բառը փոխարինել «ձկնաբուծական» բառով,

- ը ենթակետում «հոսքաջրերը» բառը՝ փոխարինել «կեղտաջրերը» բառով։

գ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) «Ջրահեռացում» բաժին 3-ը լրացվում է հետևյալ կերպ՝

ա. սյունակ Բ-ում բերվում է ջրահեռացման վայրի անվանումը (մակերևութային ջրային ռեսուրսներ, ստորերկրյա ջրավազաններ, ներծծման դաշտեր, կուտակիչներ և ռելիեֆի այլ ցածրադիր մասեր, ինչպես նաև կոյուղու ցանց՝ նշելով համապատասխան համակարգի անվանումը).

բ. սյունակ 1-ում բերվում են ջրահեռացման իրականացման ջրավազանային կառավարման տարածքի, սյունակ 2-ում՝ մարզի, սյունակ 3-ում՝ տարածաշրջանի, սյունակ 4-ում՝ համայնքի անվանումները, իսկ սյունակ 5-ում՝ այն վայրի նկարագրությունը, որտեղ իրականացվել է ջրահեռացում (օրինակ՝ Ողջի գետ, պոչամբարից հետո).

գ. մի քանի ջրահեռացման վայրերի առկայության դեպքում, յուրաքանչյուրին համապատասխան ջրահեռացումը բնութագրող տվյալները բերվում են առանձին և միայն մեկ տողով.

դ. սյունակ 6-ում բերվում են փաստացի ջրահեռացման ընդհանուր ծավալներն ըստ ջրահեռացման վայրերի.

ե. սյունակներ 7-11-ում բերվում են կեղտաջրերի բաշխվածությունն ըստ դրանց որակական ցուցանիշների.

- սյունակ 7-ում բերվում է աղտոտված (առանց մաքրման) կեղտաջրերի ծավալները (այդ թվում՝ հանքահորերի, հանքաշերտերի), որոնք արտահոսում են ջրային ռեսուրսներ.

- սյունակ 8-ում բերվում է չափանիշային մաքուր (առանց մաքրման) կեղտաջրերի ծավալը, որոնց արտահոսքը ջրահեռացման վայր չի բերում վերջինիս ջրի որակի սահմանված չափանիշների խախտման համապատասխան հատվածքում կամ ջրահեռացման կետում (հովացման համակարգ, հիդրոտեխնիկական կառույց).

- սյունակներ 9-11-ում բերվում են մաքրման կառույցներում չափանիշային մաքրված կեղտաջրերի ծավալներն ըստ մաքրման տեսակների՝ մեխանիկական՝ սյունակ 9-ում ֆիզիկաքիմիական՝ սյունակ 10-ում և կենսաբանական՝ սյունակ 11-ում: Եթե նույն ծավալի կեղտաջուրը անցնում է մի քանի մաքրման կառույցներով, ապա ծավալը պետք է լրացվի ավելի բարձր մաքրում ապահովող պրոցեսը նշող սյունակում։»,

դ) «Ցուցակ 1»-ի՝

- 112-րդ ծածկագրի «կոմունալ ջրմուղի» բառերը փոխարինել «ջրային համակարգի» բառերով,

- 120-րդ ծածկագրի «օբյեկտից» բառը փոխարինել «ռեսուրսից» բառով,

- 130-րդ ծածկագրի «օբյեկտից» բառը փոխարինել «ռեսուրսից» բառով,

- 141-րդ ծածկագրի «կոմունալ» բառը հանել,

- 170 ծածկագրի «Տարանցիկ ջրեր» բառերը փոխարինել «Ջրեր» բառով։

2. Սույն հրամանն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։